

ՀՏԴ՝ 398

DOI: 10.52971/18294316-2023.26.2-119

**ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ<sup>1</sup>**

*Էսթեր Հ. Խենյան*

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

**Ամփոփում**

*Լսվածքան.* Շիրակի բանահյուսական ժառանգության հավաքումն ու ուսումնասիրությունը սկիզբ է առել XIX դարի կեսերից: Տարածաշրջանի առաջադեմ մտավորականությունը, ըմբռնելով հարցի կարևորությունը, անհրաժեշտությունն ու հրատապությունը, ձեռնամուխ է եղել Շիրակի բազմաբնույթ ժողովրդագիտական նյութերի հավաքմանը և հնարավորության սահմաններում հրատարակմանը: Բանահյուսական ժառանգության հավաքման, հրատարակման և ուսումնասիրման գործընթացը փուլային ճանապարհով է ընթացել, որը պայմանավորված է եղել աշխարհաքաղաքական վայրիվերումներով ու փոփոխություններով: *Մեթոդներ և նյութեր.* Ուսումնասիրության համար հիմք են ծառայել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում (ՀԱԻԱ) պահված Շիրակի բանահյուսական նյութերը, XIX դարավերջից մինչև XXI դար հրատարակված բանահյուսական ժողովածուներն ու ուսումնասիրությունները: Հետազոտության համար կիրառվել են պատմահամեմատական, պատմաաշխարհագրական և քանակական մեթոդները: *Վերլուծություն.* Բանահյուսական ժառանգության ակունքները պարզելու համար ուսումնասիրությունը նախ ներկայացնում է Շիրակի անվանադրման առասպելների գիտական վերլուծությունը, ապա տարածաշրջանի անցած պատմական ուղին և բանավոր ճանապարհով փոխանցված ավանդական բանահյուսական ժանրերի պատկերը: Հոդվածում հանգամանորեն ներկայացված են Շիրակի

<sup>1</sup> Հետազոտությունը իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B027 ծածկագրով «Շիրակի հայոց բանահյուսական մշակույթը» գիտական թեմայի շրջանակներում:

բանահյուսական ժառանգության հավաքման, հրատարակման և ուսումնասիրման պատմությունը՝ ըստ ժամանակային փուլերի: *Արդյունքներ*. Հետազոտությունը ցույց է տալիս, որ Շիրակի տարածաշրջանն ունեցել է հարուստ ու բազմաբնույթ բանահյուսական մշակույթ, որը պահպանվել է հավաքչական աշխատանքների շնորհիվ: Շիրակի բանահյուսական ժառանգության մեջ արտացոլված են տարածաշրջանի պատմությունը, ազգաբնակչության տեղաշարժերը, ավանդապահությունը, սովորություններն ու հավատալիքները: Ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ Շիրակի ավանդական բանահյուսության վրա խորը կնիք են թողել զանգվածային տեղաշարժերը, որոնց հետևանքով տեղական բանահյուսական ժանրերը համալրվել են արևմտյան գավառներից բերված նոր թեմաներով ու պոեմներով, իսկ բարբառը ձեռք է բերել նոր ոճեր և բառեր:

**Բանալի բառեր՝** Շիրակի մարզ, բանահյուսություն, ավանդություն, բանահավաքներ, Գյումրի, բանահյուսական նյութեր, բանահյուսական ժառանգություն, հավաքածու, ասույթաբանություն, ազգագրություն:

**Ինչպես հղել՝** Խեմչյան Է, Քննություն Շիրակի բանահյուսական ժառանգության հավաքման և ուսումնասիրման հարցի շուրջ, // ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2(26): 119-132 էջեր: DOI:10.52971/18294316-2023.26.2-119

## RESEARCH AROUND THE QUESTION OF COLLECTING AND STUDYING THE FOLKLORE HERITAGE OF SHIRAK

*Ester H. Khemchyan*

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

### Abstract

**Introduction:** The collection and study of the folklore heritage of Shirak began in the second half of the 19th century. The progressive intelligentsia of the region, realizing the importance, necessity and relevance of the issue, started to collect and, if possible, to publish various ethnological materials of Shirak. The process of collecting, publishing and researching folklore material took place in stages, which was due to political turmoil and changes. **Methods and materials:** The research was based on the folklore materials of Shirak, kept in the archives of the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia, folklore collections and studies published from the end of the 19th to the 21st century. For the study, historical-comparative, historical-geographical and quantitative methods were used. **Analysis:** In order to clarify the origins of the folklore heritage, the study first presents a scientific analysis of the naming myths of Shirak, then the historical path of the region and a picture of traditional folklore genres transmitted orally. The article presents in detail the history of collecting, publishing and researching the folklore heritage of Shirak by time phases. **Results:** The study shows that the Shirak region had a rich and diverse folklore culture, which was preserved thanks to the collecting works. The folklore heritage of Shirak reflects the history of the region, movements, traditions, customs and beliefs of the population. The study also shows that the traditional folklore of Shirak was deeply imprinted by mass migrations, as a result of which local folklore genres were

replenished with new themes and plots brought from the western regions, and the dialect acquired new phrases and words.

**Key words:** *Shirak region, folklore, legend, collectors, Gyumri, folklore materials, folklore heritage, collection, paremiology, ethnography.*

**Citation:** Khemchyan E., *Research Around the Question of Collecting and Studying the Folklore Heritage of Shirak* // «Scientific works» of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 2(26), pp. 119-132. DOI:10.52971/18294316-2023.26.2-119

## **ИССЛЕДОВАНИЕ ВОКРУГ ВОПРОСА СОБИРАНИЯ И ИЗУЧЕНИЯ ФОЛЬКЛОРНОГО НАСЛЕДИЯ ШИРАКА**

**Эстер Г. Хемчян**

Институт археологии и этнографии НАН, Ереван, РА

### **Аннотация**

**Введение:** Собрание и изучение фольклорного наследия Ширака началось во второй половине XIX века. Прогрессивная интеллигенция региона, осознавая важность, необходимость и актуальность вопроса, взялась за собрание и по возможности издание разнообразных народоведческих материалов Ширака. Процесс собирания, издания и исследования фольклорного материала прошел поэтапно, что было обусловлено политическими суматохами и перемнами. **Методы и материалы:** Основой исследования служили фольклорные материалы Ширака, хранившиеся в архиве Института археологии и этнографии НАН РА, фольклорные сборники и исследования, изданные с конца XIX до XXI века. Для исследования использовались историко-сравнительный, историко-географический и количественный методы. **Анализ:** Для выяснения истоков фольклорного наследия исследование в начале представляет научный анализ мифов именованья Ширака, затем прошедший исторический путь региона и картину традиционных фольклорных жанров, переданных устным путем. В статье обстоятельно представлена история собирания, издания и исследования фольклорного наследия Ширака по временным фазам. **Результаты:** Исследование показывает, что ширакский регион имел богатую и разнообразную фольклорную культуру, которая сохранилась благодаря собирательским работам. В фольклорном наследии Ширака отражены история региона, передвижения, традиционность, обычаи и верования народонаселения. Исследование также показывает, что на традиционный фольклор Ширака оставили глубокую печать массовые миграции, в результате которых местные фольклорные жанры пополнялись новыми темами и сюжетами, привозившиеся из западных регионов, а диалект приобрел новые фразы и слова.

**Ключевые слова:** *Ширакский регион, фольклор, предание, собиратели, Гюмри, фольклорные материалы, фольклорное наследие, сборник, паремиология, этнография.*

**Как цитировать:** Хемчян Э. *Исследование вокруг вопроса собирания и изучения фольклорного наследия Ширака*, // «Научные труды» ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 2 (26). сс. 119-132. DOI:10.52971/18294316-2023.26.2-119

**ՆՄՆԱԲԱՆ.** Բանահյուսական հարուստ ավանդույթ ունեցող Շիրակի մարզում քանակուսական նյութերի հավաքման և ուսումնասիրման գործընթացն անմիջական-

րեն արձագանքն է ժողովրդագիտության ուսումնասիրության այն հզոր շարժման, որը սկզբնավորվել էր Եվրոպայում և Ռուսաստանում: Մեփական արմատներին և հոգևոր արժեքներին մերձենալու, գնահատելու և պահպանելու նպատակով XIX դարի կեսերից հայ մտավորականներն ու հոգևորականները պատմական Հայաստանի տարբեր գավառներից սկսեցին հավաքել ժողովրդագիտական բազմազան նյութեր (հավատալիքներ, սովորույթներ, ծեսեր, տոներ, բանահյուսական բոլոր ժանրերը, կենցաղը, տարագր, ուտեստը, ժողովրդական բժշկությունը ու չգրված օրենքները ներկայացնող նյութեր), որոնք սկզբնական շրջանում տպագրվում էին մամուլի էջերում, այնուհետև հրատարակ իջան մի շարք հիմնարար ժողովածուներ [23: 24: 25: 21: 22]՝ սկզբնավորելով հայ բանահյուսության և ազգագրության գիտական ուսումնասիրությունը:

Առաջնորդվելով բանահյուսական «հում նյութի» արժեքով, որպես գիտական ուսումնասիրությունների հիմք, Գր. Խալաթյանը կարևորում էր դրանց հրատարակությունը [5, էջ VII]: Չբացառելով կրկնությունների հնարավորությունը և առկայությունը՝ տարբեր ազգագրական-բանահյուսական ժողովածուներում և թերթերում, Գր. Խալաթյանը մատնանշում էր, որ կրկնությունը «...անհերքելի արժեք ունի՝ վերատուգելով և հաստատելով նախնիքաց հողավածները և հայ ազգագրության համեմատական ուսումնասիրության համար ավելի առատ և ապահով նյութ պատրաստելով»: Այն, ինչ ազգագրական նյութի համար կրկնություն կարող է համարվել, բանահյուսական նյութի դեպքում կոչվում է տարբերակ և որքան շատ տարբերակ՝ այն թե՛ ներկայացվող տարածաշրջանում և թե՛ Հայաստանի մյուս պատմաազգագրական շրջաններում, նպաստում և ավելի որոշակի է դարձնում ուսումնասիրության եզրակացությունները:

Շիրակի բանահյուսության գրառման պատմությունն սկսվում է XIX դարի 50-ական թվականներից, երբ հայ ժողովրդի հոգևոր արժեքների գնահատումն ու հավաքումն արդեն վաղուց իր հաստատուն տեղն էր գրավել հայ ժողովրդի պատմության մեջ: Շիրակի պատմաազգագրական շրջանն իր գրաված դիրքով, պատմությամբ, ներէթնիկ յուրօրինակ շերտերով (Հայաստանի զանազան բնակավայրերից եկած գաղթականներ և պանդուխտներ), ավանդապահությամբ, խոսքաշենությամբ ու սրամտությամբ չէր կարող վրիպել բանահավաքների ուշադրությունից:

**Բանահավաքչության, հրատարակության և ուսումնասիրության գործընթացը  
Շիրակում (XIX դարավերջ – XX դ.)**

Նետագոտությունն ընդգրկում է XIX դարից մինչև մեր օրերը տարածաշրջանի բանահյուսական նյութերի կենցաղավարման, շրջանառման, հավաքման և հրատարակման ընթացքը իր դրսևորումներով և բանահյուսական ժառանգության պատկերը: Տարածաշրջանի արմատական բնակչության հաղորդակցման լեզուն Շիրակի բարբառն է, որը մինչ այսօր ոչ միայն պահպանել է իր կենսունակությունը, այլև ժողովրդագրական զանգվածային տեղաշարժերի, փոխազդեցությունների ու փոխներթափանցումների հետևանքով ձեռք է բերել նոր որակ, որն առկա է թե՛ բանավոր խոսքում և թե՛ բանահյուսական նյութերի համատեքստում:

Պատմական բոլոր ժամանակահատվածներում բանավոր խոսքի պահպանվածությունը վտանգված է եղել: Կենցաղավարումից դուրս եկող որոշ իրողությունների

կորստյամբ պայմանավորված՝ մոռացության են տրվել դրանց ուղեկցող բանավոր խոսքի դրսևորումները: Որպես ցայտուն օրինակ կարելի է դիտարկել երկրագործական մշակույթին և կենցաղային արտադրամիջոցների գործողություններին ուղեկցող աշխատանքային երգերը (հորովել, սանդի, ճախարակի, խնոցու և այլ երգեր): Կարևորելով նման պատճառների աղետաբեր հետևանքները՝ անհրաժեշտ էր բանահյուսական նյութը գրառել ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում:

Շիրակի տարածաշրջանի բանահյուսական նյութերի հավաքման ժամանակագրական պատկերից ելնելով՝ պայմանականորեն տարբերակել ենք հավաքչական աշխատանքի երեք փուլ:

Առաջին փուլն ընդգրկում է XIX դարի 50-ականներից մինչև XX դարի 20-ական թվականները (բանահավաքներ՝ Աղեքսանդր Մխիթարյանց, Աղեքսանդր Ափրիկյան, Քաջբերունի, Տիգրան Նավասարդյան, Երվանդ Լալայան, Հովհաննես Կոստանյան և ուրիշներ):

Երկրորդ փուլը համընկնում է Հայաստանի երկրորդ հանրապետության ժամանակահատվածի հետ և բաժանվում է երկու ենթափուլի.

ա) 1920-ական թվականներից մինչև 1960-ական թվականներ (բանահավաքներ Գեղամ Թարվերդյան, Մնացական Թամրազյան, Խայաթ (Սուքիաս Զահրիյան), Նիկողոս Նիկողայան, Համբարձում Տեր-Վարդանյան, Վարդ Բոյոյան:

բ) Երկրորդ ենթափուլն ընդգրկում է 1960-ական թվականներից մինչև 1990-ական թվականները և հիմնականում կապվում է Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի բեղուն աշխատանքների հետ: Այս փուլում հավաքչական գործով զբաղվել են թե՛ ինստիտուտի գիտաշխատողներն ու բանահավաքները (Արտաշես Նազինյան, Սարգիս Հարությունյան, Արուսյակ Մահակյան, Արագ Կարապետյան) և թե՛ սիրող մտավորականների մի մեծ խումբ (Բարխուդար Ղազիյան, Պարույր Բարսեղյան, Հրաչ Մկրտչյան, Հրաչ Օհանյան, Ստեփան Խաչատրյան, Եղիշե Խաչատրյան և ուրիշներ):

Երրորդ փուլն ընդգրկում է 1990-ական թվականներից մինչև մեր օրերը և հիմնականում կապվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հետ (բանահավաքներ՝ Կարինե Մահակյան, Հասմիկ Մատիկյան, Կարինե Բազեյան, Հասմիկ Հարությունյան և ուրիշներ):

### **Առաջին փուլ**

Ազգային զարթոնքի, սեփական արմատներին մերձենալու և ինքնաճանաչման ու գնահատման մղումներով պայմանավորված, հետևելով ռուսական և եվրոպական փորձին ու ձեռքբերումներին՝ հայ մտավորականությունն ակտիվորեն ձեռք զարկեց ժողովրդագիտական բազմաբնույթ նյութերի հավաքմանը: XIX դարի երկրորդ կեսին ազգագրական և բանահյուսական նյութերի միջև դեռևս տարբերակում չէր դրվում [30, էջ 29], և սիրող բանահավաքները, ըստ իրենց նախասիրությունների, գրառում էին այն նյութերը, որոնք կարևորում էին: Շիրակի մարզի բանահյուսական նյութերի աշխարհագրական տարածման ու դրա ընդգրկման մասին պատկերացումները պայմանավոր-

ված էին նաև բանահավաքների շրջագայելու հնարավորություններով: Օրինակ, Քաջբերունին (1837-1920)<sup>2</sup> իր ծառայողական բազմամյա ուղևորությունների ընթացքում շրջելով Հայաստանի գավառներում, նաև Շիրակ, Կարս, Բասեն տարածաշրջաններում և ծանոթանալով ժողովրդի կյանքին ու կենցաղին, վարք ու բարքին, ժողովրդական սոներին և դրանց լրացնող ծիսական արարողություններին՝ գրառել է ինքնատիպ ու բազմաժանր նյութեր, որոնց մի մասը տպագրվել է Ազգագրական հանդեսի VII-VIII և IX գրքերում [26: 27] «Հայկական սովորություններ վերնագրի տակ: Քաջբերունու հավաքչական աշխատանքն ինքնանպատակ չի եղել: Նա շրջագայությունների ընթացքում նկատել է, որ ժամանակի ընթացքում հայկական սովորություններից շատերը. «... աննկատելի կերպով արդեն մոռացվել են, ոմանք սակավ առ սակավ մոռացվում են կյանքի նոր հոսանքի ազդեցության տակ, ուրեմն մոռացվածը կարող է պահել միայն գրականությունը:» [26, էջ 114]

Առաջնորդվելով ազգային ավանդությունները, սովորությունները, երգերը ուսումնասիրելու և կորստից փրկելու ցանկությամբ՝ նա գրառել և հնարավորության սահմաններում տպագրել է իր գրառած նյութերն ու ուղեգրությունները: Քաջբերունին ինքնուրույն մոտեցում է ունեցել իր հավաքած նյութերի նկատմամբ, տարբեր գավառների նույնատիպ նյութերի տարբերակները, բերել է կողք կողքի, վերլուծել և ցույց է տվել դրանց նմանություններն ու տարբերությունները, ներկայացրել տարածաշրջանային առանձնահատկությունները: Եթե Քաջբերունու հավաքչական գործունեությունը լայն ընդգրկում ուներ և կենտրոնացնում էր ողջ համահայկական ժողովրդագիտական նյութերը, ապա Շիրակի տարածաշրջանում աշխատած մյուս բանահավաքները առաջնորդվում էին զուտ տեղական բանահյուսական արժեքները գրանցելու և ուսումնասիրելու նկատառումներով: Դեռևս XIX դարի 80-ական թվականներին պեքսանդրապոլցի Աղեքսանդր Ափրիկյանը<sup>3</sup> բանահավաքչական աշխատանքների ընթացքում նկատել էր, որ Շիրակի ազգաբնակչությունն անխառն չէ, և զգալի մաս է կազմում արևմտահայ գավառների գաղթականությունը, որը հետևանք էր թուրքական բռնաճնշումների և ռուս-թուրքական պատերազմների: Արևմտահայ փախստականները, տեղավորվելով Շիրակի գյուղերում, համատեղ կյանքի ընթացքում միավորվելով տեղացիների հետ, ընդունելով տեղացիների վարք ու բարքը, սովորությունները, դրանց ավելացնելով իրենց՝ տարբեր տարածաշրջաններից (Վասպուրական, Մուշ, Կարին, Ալաշկերտ և այլն) եկվորների սովորությունները, կենցաղը, լեզուն, հոգևոր մշակույթը՝ նպաստել էին ընդհանուր ժողովրդագիտական պատկերի նոր որակի առաջացմանը: Եկվորները նաև համալրել էին Շիրակի բարբառը սեփական ոճերով ու բառերով: Հեքիաթներ գրա-

<sup>2</sup> Քաջբերունին (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան) 1858 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1859 թ. ընդունվել և 1864 թ. ավարտել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Կես դար ծառայել է իբրև գավառական բժիշկ: Մասնագիտությանը զուգահեռ գրադրվել է գրականությամբ, հայագիտությամբ, ժողովրդագիտությամբ: Գրական ասպարեզ է իջել «Տեր Սարգիս» վեպով:

<sup>3</sup> Աղեքսանդր Ափրիկյան, ծնվել և ապրել է Ալեքսանդրապոլում, հայտնի հայագետ Գրիգոր Խալաթյանի մանկության ընկերն է, գրադրվել է բանահավաքչությամբ և հայ ժողովրդական հեքիաթների դիտարկմամբ, որն ընդհատվել է վաղաժամ մահվան պատճառով: 1880 թ. գրառած հեքիաթները (թվով 4 հատ) Գր. Խալաթյանն ընդգրկել է «Փշրանք Շիրակի ամբարներից ժողովածուի մեջ [19]:

ռելիս Ափրիկյանն ուշադրություն է դարձնում, որ. «... մեզանում իրաքանչիւր հեքիաթ ասողը համարեա ունի իւր խոսակցութեան առանձին ոճերն ու վերջավորութիւնները» [5, էջ IX]

Նա Շիրակի տարածաշրջանի ժողովրդախոսակցական լեզուն անվանում է «բազմաբարբառ լեզու», որի մեջ մուտք են գործել և «պատշաճաւոր տեղ են բռնել» նաև օտար (պարսկական և տաճկական) բառերը: Հեքիաթների լեզուն դիտարկելով՝ նա հանգել է հետևյալ եզրակացությանը. «Արտաքսել, դուրս քշել այժմ միանգամից օտար բառերը մեր ժողովրդական հեքիաթների միջից, նշանակում է բոլորովին քամել նրանցից ժողովրդական ոգին, ջնջել նրանց վրայից ժողովրդական տիպարը:» [5, էջ IX]

Նմանօրինակ դիտարկումների արդյունքում ձևավորվեց բանահյուսական նյութերի գրառման ընդունված մեթոդը, այն է՝ ճշգրտորեն պահպանել բանասացի արտաբերած յուրաքանչյուր բառը, անհասկանալի բառերը տեղնուտեղը ստուգաբանել և բացատրել, հավատարիմ մնալ և դույզն իսկ չշեղվել բանասացի պատումից: Շատ կարևոր էր նաև բանասացի արմատները (ծագումով որտեղից էին նախնիները) և իր պատումի սկզբնաղբյուրը, նյութի փոխանցման ճանապարհները հստակեցնելը, որն անհրաժեշտ էր նյութի կրած փոփոխություններն ուսումնասիրելու համար:

XIX դարի 70-80-ական թթ. տոհմիկ ալեքսանդրապոլցի Աղեքսանդր Մխիթարյանցը (1846-1916)<sup>4</sup> ուսուցչությանը և գրահրատարակչությանը զուգահեռ Շիրակի և Վանանդի<sup>5</sup> բնակավայրերում հավաքել է բազմաժանր բանահյուսական-ազգագրական նյութեր: Դեռևս 1887 թ. նրա հավաքածուն պատրաստ էր հրատարակության, որը միջոցներ չլինելու պատճառով 14 տարի մնացել է անտիպ: Վերջապես 1901 թ. Աղեքսանդր Մխիթարյանցի «Փշրանք Շիրակի ամբարներից» խորհրդանշական վերնագիրը կրող ժողովածուն լույս է տեսել Էմինյան ազգագրական ժողովածուի Ա հատորում [19]: Այն բովանդակում է Շիրակի գավառի (Ալեքսանդրապոլ) վիպական բանահյուսության և ազգագրության առատ նյութ և տարածաշրջանի ժողովրդագիտության հավաքման, ուսումնասիրման և հրատարակման առաջին ամբողջական փորձն է: Շիրակի քնարական բանահյուսության նյութերը Մխիթարյանցը «Տաղեր և խաղեր» վերնագրով հրատարակում է 1900 թ: Սա պատմական այն ժամանակահատվածն էր, երբ առաջնորդվելով բանահյուսական «հում նյութի» արժեքով, որպես գիտական ուսումնասիրությունների հիմք, կարևորվում էր դրանց հավաքումն ու հրատարակությունը: 1899 թ. Ազգագրական հանդեսի Ե գրքում լույս է տեսնում բանահավաք և կրթական գործիչ Մկրտիչ Իսահակյանի (1870-1921)<sup>6</sup> «Շիրակի ժողովրդական երգեր» հավաքածուն [8, էջեր 200-212], որը նա գրառել է Գյումրիի և շրջակա գյուղերի բնակիչներից: Հավաքածուում ընդգրկված են քնարական բանահյուսության Շիրակի տարածաշրջանում XIX դարավերջին կենցաղավարող սիրո երգերն ու պարերգերը, ինչպես նաև տեղական ամենա-

<sup>4</sup> Աղեքսանդր Մխիթարյանցը սովորել է Ալեքսանդրապոլում, ապա ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Չբաղվել է մանկավարժությամբ, գրահրատարակչությամբ, բանահավաքչությամբ:

<sup>5</sup> Վանանդ գավառը մտել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի մեջ, գտնվում է Ախուրյան գետի հովտում: Ուսումնասիրվող ժամանակահատվածում եղել է Կարսի մարզի մեջ [12, էջ 753]:

<sup>6</sup> Մկրտիչ Իսահակյանը ծնվել, ապրել և գործել է Ալեքսանդրապոլում: Բանաստեղծ Ավետիք Իսահակյանի եղբայրն է: Երկար տարիներ զբաղվել է ուսուցչությամբ և բանահավաքչությամբ:

տարածված և սիրված աշուղական երգերը: XIX դարավերջին Շիրակի քնարական բանահյուսության հավաքման, ձայնագրման և ուսումնասիրման գործում մեծ ավանդ ունի ալեքսանդրապոլցի հայտնի երաժշտագետ, բանագետ Արշակ Բրուտյանը (1864-1936)<sup>7</sup>, որի «Ռամկական մրմունջներ» խորագիրը կրող ժողովրդական երգարանը այնպիսի մասսայականություն է վայելել, որ ինը տարիների ընթացքում չորս հրատարակություն է ունեցել (1895,1898,1901,1904): Թեև Բրուտյանն ուներ երգերի ձայնագրությունները, սակայն այլևայլ պատճառներով նա միայն տեքստերն է հրատարակում: Իր կենդանության օրոք նրան չի հաջողվում հրատարակել ժողովածուի ձայնագրված ամբողջական տարբերակը, որը 1898 թ. արդեն պատրաստ էր հրատարակության: 1985 թ. Արշակ Բրուտյանի թոռնուհին՝ երաժշտագետ Մարգարիտ Բրուտյանը, ի կատար է ածում մեծ երախտավորի երազանքը, և «Ռամկական մրմունջներ» արժեքավոր ժողովածուն (բանահյուսական տեքստերով, նոտագրություններով և ճանաչողական արժեք ներկայացնող ծանոթագրություններով) երկու լեզվով (հայերեն և ռուսերեն) [3] ներկայացվում է ընթերցողների և մասնագետների դատին:

Շիրակի վիպական բանահյուսությանն ու ժողովրդագիտական բազմազան նյութերին ուշադրություն է դարձրել և հավաքել նաև Հովհաննես Կոստանյանցը: Նա յուրովի մոտեցում է ունեցել ժողովրդական նյութերին և դրանց մշակումները 1896 թ. ներկայացրել է «Շիրակի լեգենդաներից և ժողովրդական կյանքից» գրքում [10]:

Շիրակի մարզի տարածքում բանահյուսության և ազգագրության նկատմամբ ձևավորված բուռն հետաքրքրությունն ու հավաքչական աշխատանքը շարունակվեց նաև XX դարակրթին: 1911 թ. ազգագրագետ-բանագետ Երվանդ Լալայանը նյութեր է գրառել Շիրակի գյուղերում:

Լալայանի գրառած Շիրակի հեքիաթներն ընդգրկվել են Շիրակի և շրջակա տարածաշրջանների հեքիաթները ներկայացնող «Հայ ժողովրդական հեքիաթներ» մատենաշարի IV հատորում [11, էջեր 15-194]:

Վերոհիշյալ բանահավաքների հավաքածուները և տարբեր սիրող-բանահավաքների գրառած և մամուլում տպագրած բանահյուսական նյութերն ամբողջացնում են XIX դարավերջի և XX դարակրթի Շիրակի վիպական բանահյուսության պատկերը:

### **Երկրորդ փուլ**

Ինչպես արդեն ասվել է, Շիրակի բանահյուսական նյութերի հավաքման երկրորդ փուլը համընկնում է Խորհրդային Հայաստանի գոյության տարիների հետ: Շիրակը՝ որպես բանահյուսական բազմաժանր նյութերի շտեմարան, միշտ եղել է բանահավաքների ուշադրության կենտրոնում: Խորհրդայնացումից հետո ժողովրդի կյանքում մեծ փոփոխություններ տեղի ունեցան, և ավանդական կացութաձևը, սովորությունները, առավել ևս հավատալիքները հետին պլան մղվեցին: Կենցաղավարումից դուրս եկան բազում իրողություններ, երիտասարդությունն առաջնորդվեց նոր գաղափարներով, նոր կենցաղի յուրացմամբ, իսկ ավանդականը մնաց ավագ սերնդի հիշողության մեջ:

<sup>7</sup> Արշակ Բրուտյանի ողջ ստեղծագործական, մանկավարժական, բանահավաքչական կյանքը կապված էր Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի քաղաքի և Շիրակի հետ:



Դիտարկելով առաջին փուլի առաջին ենթափուլում գրառված բանահյուսական նյութերը՝ նկատում ենք, որ 1925-34 թվականներին հատկապես ուշադրություն են դարձրել քնարական բանահյուսության նորովի դրսևորումներին: Բանահավաք Գեղամ Թարվերդյանը շրջագայել է Հայաստանով մեկ (այդ թվում նաև՝ Շիրակում) և գրառել է ժամանակի պահանջներին համեմատ նորաստեղծ երգեր, որոնց թեմատիկան հիմնականում խորհրդային երկրի առօրյայի, կուսակցական ղեկավարների (Լենին, Ստալին), կոլտնտեսային կյանքի («Տրակտորի երգը», «Կոլխոզի խաղը») տեղական նշանակության անհատների և դեպքերի («Լենինականի հայկինոյի հրդեհը») մասին էր [6, էջեր FFI: 2349-3802]: Այս ենթափուլում Շիրակի Ամասիա, Ղուկասյան, Ախուրյան, Լենինական, Պեմզաշեն բնակավայրերից բազմաժանր բանահյուսական նյութեր են գրառել Մնացական Թամրազյանը, աշուղ Խայաթը (Սուքիաս Զահրիյան), Նիկողոս Նիկողոսյանը, Համբարձում Տեր-Վարդանյանը, Վարդ Բդոյանը, որոնց ձեռագիր հավաքածուները պահվում են ՀԱԻ արխիվում, իսկ մի մասը տպագրվել է տարբեր ժանրային ժողովածուներում: 20-30-ական թվականներին Հերիք Հարթենյանն իր հորից՝ աշուղ Ծաղկալուց (Մելիքսեթ Հարթենյան) գրառել է հրաշապատում և իրապատում հեքիաթներ, աստվածաշնչյան ավանդություններ, զվարճախոսություններ, երգեր, ժողովրդական բժշկության նմուշներ և այլն, որոնք անտիպ են և պահվում են ՀԱԻ արխիվում:

Այս ենթափուլի հավաքածուների մեջ առանձնանում են Շիրակի աշուղների գործունեությանը նվիրված աշխատանքները: Աշուղական ավանդույթի արմատները Շիրակում դարերի խորքն են գնում, և աշուղական երգարվեստը այս պատմաագագրական շրջանի բնորոշ ասանձահատկություններից մեկն է: Բանահավաք Մնացական Թամրազյանը ներկայացրել է 1830-1930 թթ ժամանակահատվածում Ալեքսանդրապոլ-Լենինականում ապրած և ստեղծագործած աշուղների մասին ինքնատիպ հուշապատում-ուսումնասիրություն, որն արժեքավոր սկզբնաղբյուր է այս ասպարեզն ուսումնասիրողների համար:

Հավաքչական աշխատանքի երկրորդ ենթափուլը (1960-90 թթ) ներկայացնում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության և բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժինների հավաքչական, հետազոտական և հրատարակչական բուռն գործունեությունը, որի մեջ ընդգրկված է նաև Շիրակի մարզի բանահյուսական մշակույթը: 60-ական թվականներին Շիրակի մարզում աշխատել են բանագիտական-բանահավաքչական արշավախմբեր (Մարգիս Հարությունյան, Արտաշես Նազինյան, Արուսյակ Սահակյան, Ժենյա Խաչատրյան, Արագ Կարապետյան), ովքեր թե՛ ձեռքով և թե՛ ձայնագրիչով գրառել են բազմաժանր բանահյուսական նյութեր՝ հիմնականում ավագ սերնդի բանասացներից, որոնք մտապահել են մանկության տարիներին լսածը և սովորածը: Գիտաշխատողների հավաքածուները համալրվել են սիրող և կամավոր բանահավաքների հավաքածուներով: Միրող բանահավաքները, հիմնականում թոշակառու մտավորականներ, ուսուցիչներ, դերասաններ, լրագրողներ, պետական-կուսակցական աշխատողներ, իրենց հետաքրքրությունների շրջանակում Շիրակի գյուղերում և Լենինական քաղաքում գրառել են բանահյուսական բազմաժանր նյութեր, որոնք ընդգրկված են ՀԱԻ արխիվի ֆոնդերում և ներկայացնում են XX դարի 50-90-

ական թվականներին Շիրակի տարածաշրջանում պահպանված և դեռևս կենցաղավարող ավանդական բանահյուսական նյութերը:

Շիրակցի սիրող բանահավաքների հավաքածուներից յուրաքանչյուրն առանձնանում է իր ընդգրկած ժանրերով, որոնք գրեթե 100 տարվա կտրվածքով տարածաշրջանի վիպական բանահյուսության պատկերն են ներկայացնում: Ալեքսանդրապոլում ծնված և մեծացած, Մոսկվայում բարձրագույն կրթություն ստացած Պարույր Բարսեղյանի իր հավաքածուում ներկայացրել է Ալեքսանդրապոլ-Գյումրի-Լենինական քաղաքի ինքնատիպ դեմքը. «... ուրույն տրադիցիաներով, առանձնահատկություններով, կենցաղով և հոգեբանությամբ (այսինքն բարբառով, հայրենասիրությամբ, կրոնասիրությամբ, լոպպագությանամբ, կատակասիրությամբ, սրամտությամբ, հումորով, մարդուն ձեռ առնելու ունակությամբ, երգի ու նվագի հանդեպ սիրով, «լազաթին քեֆերով», հակումով դեպի թևավոր խոսքերը, անլեզավ դարձվածքներով և հայհոյանքներով) այն անփոխարինելի քաղաքային միջավայրն էր, որը ծնունդ և սնունդ է տալիս զվարճախոսություններին»: [2, էջ FFVI: 6638]

Պարույր Բարսեղյանը ներկայացրել է այս ինքնատիպ քաղաքի զվարճախոսներին (Պոլոզ Մուկուչ, Ջղեր, Ծիտրո, Կուժիկ և ուրիշներ), նշանավոր հին գյումրեցիների իրենց բազում պատումներով, գյումրեցիների 1400 մականունները, որոնցից յուրաքանչյուրի տակ մի հետաքրքիր պատմություն է թաքնված, իրապատում և հրաշապատում հեքիաթներ, զրույցներ, քնարական բանահյուսության և ասույթաբանության շիրակյան ողջ շքեղ երանգապնակը:

Շիրակի ասույթաբանական նյութը՝ հազարավոր առած-ասացվածքները, անեծք-օրհնանքները, շուտասելուկները, հանելուկները, երդումներն ու փաղաքշական խոսքերը, կազմում է բանահավաքներ Անուշավան Գևորգյանի, Աշոտ Գևորգյանի, Հրաչ Մկրտչյանի, Հրաչ Օհանյանի և այլոց հավաքածուների հիմնական «մեխը»: Բանահավաքները պահպանել են բարբառային առանձնահատկությունները և իրենց հավաքածուներին կցել են բարբառային բառերի բացատրական բառարաններ:

### **Երրորդ փուլ**

Շիրակում բանահավաքչական աշխատանքների երրորդ փուլը համընկնում է Հայաստանի երրորդ հանրապետության տարիներին (XX դարի 90-ական թվականներ – XXI դարասկիզբ) և հիմնականում կապված է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գործունեության հետ: Կենտրոնի գիտաշխատողների նպատակներից մեկն է հավաքել և գրառել ներկայումս կենցաղավարող բանահյուսական նյութերը և դրանց հետազոտությամբ ու համեմատություններով վեր հանել ավանդական բանահյուսական նյութի պահպանվածության, փոփոխությունների և ժանրային դրսևորումների խնդիրը:

Շիրակի բանահավաքչության պատմությունը ցույց է տալիս, որ XIX դարից մինչ օրս կուտակվել է ավանդական բանահյուսական ժառանգության հարուստ նյութ, որի հրատարակությունն ու ուսումնասիրությունը համարժեք չէ հավաքչական աշխատանքներին: Խորհրդային և հետխորհրդային տարիներին ակադեմիական հրատարակությամբ լույս աշխարհ են եկել հայ ժողովրդական հեքիաթների մատենաշարի շիրա-

կյան հատորը [11, էջեր 15-194] և բանահյուսական առանձին ժանրերին նվիրված ժողովածուներում ընդգրկված Շիրակի ավանդական նյութերը [16: 17:13: 14]: Սույն ժամանակահատվածում առանձին սիրող-բանահավաքներ, ըստ իրենց նախասիրությունների, գրառել և հրատարակել են ժողովրդական բանարվեստի երգիծական բնույթի գրույցներ, սրամտություններ, զվարճալի պատմություններ, անեկդոտներ և այլն: Այդ շարքում հատկանշական են Հ. Իկիլիկյանի «Գյումրին, Պոլոզ Մուկուչը և երգիծական մանրապատումներ» [7], Հ. Գևորգյանի «Լենինականյան զվարճալի գրույցներ և սրամտություններ» [4], Մ. Հովհաննիսյանի «Ոսկեհասկ (Մոլլա-Մուսա) գյուղի պատմությունը, ազգագրությունը, բանահյուսությունը» [15] գրքերը:

Շիրակի բանահյուսական ժառանգությանը նվիրված առանձին գիտական ուսումնասիրություններ նույնպես չեն եղել: Սակայն 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կազմակերպած գիտաժողովներում հնչել են բանահյուսության տարբեր խնդիրներին նվիրված գեկուցումներ, որոնք այնուհետև հոդվածների տեսքով հրատարակվել են ՇՀՀԿ-ի գիտական հետազոտությունների ժողովածուներում (Սարգիս Պետրոսյան, Կարինե Սահակյան, Հասմիկ Հարությունյան, Էսթեր Խեմյան, Սերգո Հայրապետյան, Մարինե Խեմյան, Լուսինե Ղեջյան, Հասմիկ Գալստյան, Հասմիկ Մատիկյան, Ռաիսա Խաչատրյան և ուրիշներ):

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Ամբողջացնելով Շիրակի բանահյուսության XIX դարավերջից մինչև մեր օրերը հավաքված և հրատարակված նյութերը՝ կարելի է ասել, որ գործ ունենք հսկայական հոգևոր ժառանգության հետ, որն ընդգրկում է բանահյուսության բոլոր ժանրերը, ներկայացնում է տարածաշրջանի բարբառների ու խոսվածքների երանգապնակը, բանահյուսության կենցաղավարած և կենցաղավարող տեսակներն ու բանահյուսական երկացանկը, տեղական սովորույթների, հավատալիքների, ծեսերի, կենցաղի առօրյա դրսևորումները, լեզվամտածողության և պատմելաոճի առանձնահատկությունները և այլն:

### **Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն**

1. Անանիա Շիրակացի. *Մատենագրություն*: «Հայ մատենագիրներ» մատենաշար: Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1979: 400 էջ:
2. Բարսեղյան Պ. *Ձեռագիր հավաքածու*: ՀԱԻԱ էջեր FFVI: 6638:
3. Բրուսյան Ա. *Ռամկական մրմունջներ*: Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1985: 240 էջ:
4. Գևորգյան Հ. *Լենինականյան զվարճալի գրույցներ և սրամտություններ*: Երևան: «Հայաստան» հրատ. 1989: 180 էջ:
5. Էմինեան ազգագրական ժողովածու: Հ. Ա. *Փշրանք Շիրակի ամբարներից*, հավաքեց՝ Ա. Մխիթարեանց, Մոսկուա-Ալեքսանդրապոլ: Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց հրատ.: 1901: 338 էջ:
6. Թարվերդյան Գ. *Ձեռագիր հավաքածու*: ՀԱԻԱ էջեր FFI: 2349-3802:
7. Իկիլիկյան Հ. *Գյումրին, Պոլոզ Մուկուչը և երգիծական մանրապատումներ*, Երևան, «Հայաստան» հրատ.: 1989: 350 էջ:
8. Իսահակյան Մ. *Շիրակի ժողովրդական երգեր* // Ազգագրական հանդես: Գիրք Ե: Թիֆլիս: Կ. Մարտիրոսեանցի տպարան: 1889: էջեր 200-212:

9. Կատվայան Մ. *Շիրակ // Հայկական Սովետական Հանրագիտարան*: Հ. VIII: Երևան: Հայկական հանրագիտարանի հրատ.: 1982: էջ 512-514:
10. Կոստանեանց Յ. *Շիրակի լեզներդաներից ու ժողովրդական կեանքից*: Ալեքսանդրապոլ: Մալխասեանց տպ.: 1896: 78 էջ:
11. Հայ ժողովրդական հեքիաթներ. *Շիրակ*: Հ. IV, Երևան, ԳԱ հրատ.: 1963: 552 էջ:
12. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: Հ. 4, Ե-Վ, Թ.Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ.Խ. Բարսեղյան: Երևան: ԵՀ հրատ.: 1998: 812 էջ:
13. Հարությունյան Ս. *Հայ ժողովրդական հանելուկներ*: Երևան, ԳԱ հրատ.: 1965: 430 էջ:
14. Հարությունյան Ս. *Հայ հնայական և ժողովրդական աղբյուրներ*, Երևան: ԵՀ հրատ.: 2006: 504 էջ:
15. Հովհաննիսյան Մ. *Ոսկեհասկ (Մոլլա-Մուսա) գյուղի պատմությունը, ազգագրությունը, բանահյուսությունը*, Երևան: «Արեգ» հրատ.: 2005: 400 էջ:
16. Ղանալանյան Ա. *Առածանի*: Երևան: ԳԱ հրատ.: 1960, 398 էջ:
17. Ղանալանյան Ա. *Ավանդապատում*: Երևան: «Հայագիտակ»: 2022: 832 էջ:
18. Մանանդյան Հ. *Երկեր, հատոր Ե, Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պորթլենների մասին*: Երևան: ԳԱ հրատ.: 1984: 615 էջ.:
19. Մխիթարեանց Աղ. *Փշանք Շիրակի ամբարներից // Էմինեան ազգագրական ժողովածու*: Հ. Ա: Մոսկուա-Ալեքսանդրապոլ: Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց հրատ.: 1901: 338 էջ:
20. Մովսէս Խորենացի. *Պատմություն հայոց*: Աշխատասիրութեամբ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութինեանի: Տփղիս: Կ. Մարտիրոսեանցի տպ.: 1913: 396 էջ:
21. Շերենց Գ. *Վանայ սագ, Հաւաքածոյք Վասպուրականի ժողովրդական երգերի, հէքեայթների, առածների և հանելուկների*: Առաջին մաս (Տեղի բարբառով): Թիֆլիս: Կ. Մարտիրոսեանցի տպ.: 1885: 187 էջ:
22. Շերենց Գ. *Վանայ սագ, Հաւաքածոյք Վասպուրականի ժողովրդական երգերի, հէքեայթների, առածների և հանելուկների*: Երկրորդ մաս (Տեղական բարբառով), Թիֆլիս: Կ. Մարտիրոսեանցի տպարան: 1899: 191 էջ:
23. Սեդրակեան Ա. *Քնար մշեցոց եւ վանեցոց (մինչև այժմ չհրատարակված երգեր)*: Ի Վաղարշապատ: Ի տպարանի Կաթուղիկէ Էջմիածնի: 1874: 46 էջ:
24. Սրուանձտեանց Գ. *Մանանայ*: Կ. Պոլիս: Տպագրութիւն Ե.Մ. Տնտեսեան: 1876: 457 էջ:
25. Սրուանձտեանց Գ. *Համով-հոտով*: Կ. Պոլիս: Տպագրութիւն Գ. Պաղտատլեան (Արամեան): 1884: 384 էջ:
26. Քաջբերունի Գ. *Հայկական սովորություններ // Ազգագրական հանդէս*: Գրքեր VII-VIII: Թիֆլիս: Կ. Մարտիրոսեանցի տպարան: 1901: էջեր 113-204:
27. Քաջբերունի Գ. *Հայկական սովորություններ // Ազգագրական հանդէս*: Գիրք IX: Թիֆլիս: Կ. Մարտիրոսեանցի տպարան: 1902: էջեր 83-116:
28. Dan R. *A Study of the Toponyms of the Kingdom of Bia/Urartu: with a contribution by Marie-Claude Tremouille*. Roma. Scienze e Lettere. 2020. 352 p.
29. Бунятовъ Гр. *Памятники древности въ окрестностяхъ селенія Башъ-Шурагель // Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племень Кавказа*. Выпускъ XIII. Отдѣлъ I. Тифлисъ. 1892. 152с.
30. Варданян С. *Вкладъ Тиграна Навасардяна въ армянскую фольклористику // Հայ ազգագրություն և բանահյուսություն*: Հ. 18 Երևան: ԳԱ հրատ.: 1991, 5-58 էջեր.
31. Паткановъ К., *Ванскія надписи и значеніе ихъ для исторіи передней Азіи*. С.-Петербургъ. 1881.178с.

**R e f e r e n c e s**

1. Anania Shirakatsi. Cronicle (Armenian chroniclers) [*Matenagrutyun (Hay matenagirner)*]. Yerevan: “Sovetakan grosh” publ. 1979, 400 p. (in Armenian)
2. Barseghyan P. Manuscript collection [*Dzeragir havak'atsu*] Archive of the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia (AIAE NAS RA), p. FFVI:6638. (in Armenian)
3. Brutyan A. Peasant songs [*Ramkakan mrmunjner*]. Yerevan: “Sovetakan grosh” publ. 1985, 240 p. (in Armenian)
4. Gevorgyan H. Leninakan’s jokes and funny stories [*Leninakanian zvarchali zruiys'ner ev sramtutyunner*]. Yerevan: “Hayastan” publishing house. 1989, 180 p. (in Armenian).
5. Eminian ethnographic collection. Debris from the Shirak Ambars [*P'shranq Shiraki ambarnerits*]: Vol. A, Moskov-Alexandrapol: 1901, 388p. (in Armenian)
6. Tarverdyan G. Manuscript collection [*Dzeragir havak'atsu*] AIAE: p. FFI: 2349-3802 (in Armenian)
7. Iklilyan H. Gyumri, Poloz Mukuch and satirical miniatures [*Gyumrin, Poloz Mukuchy ev ergitsakan manrapatumner*]. Yerevan: “Hayastan” publishing house. 1989. 350 p. (in Armenian)
8. Isahakyan M. Folk Song of Shirak [Shiraki joghovrdakan erger] // Ethnographic journal, Book IX]. Tiflis. 1899, pp. 200-212 (in Armenian)
9. Katvalyan M. Shirak [*Shirak*] // Soviet Armenian Encyclopedia, volume VIII. Yerevan: Publishing House Armenian Encyclopedia.1982. pp. 512-514 (in Armenian)
10. Kostaneants H. From the Shirak legends and people’s life [*Shiraki lelgendanerits ev jhoxovrdakan kyanqits*]. Alexandropol: Malkhaseants publishing house, 1896. 78 p. (in Armenian)
11. Armenian Folk Tales, Shirak, volume IV [Hay zhoghovrdakan hek'iatner, Shirak, hator IV]. Yerevan: Publishing house of the Academy of Sciences of SSRA. 1963, 552 p. (in Armenian)
12. Dictionary of Toponymy of Armenia and Adjacent Territories, Volume 4 [*Hayastani ev harakic shrjanneri texanwunneri bararan: 5 hatorov: Hakobyan T. Kh., Melik-Bakhshyan St. T., Barseghyan H. Kh., hator 4*]. Yerevan: Publishing House of the Yerevan University. 1998, 812 p. (in Armenian)
13. Harutyunyan S. Armenian Folk Riddles [*Hay zhoghovrdakan hanelukner*]. Yerevan: Publ. house of the AS of the Armenian SSR. 1965. 430 p. (in Armenian)
14. Harutyunyan S. Armenian Incantations and Folk Prayers [*Hay hmayakan ev zhoghovrdakan aghot'k'ner*] Yerevan: Publishing House of the Yerevan University. 2006, 504 p. (in Armenian)
15. Hovhannisyan M. History, Ethnography, Folklore of village Voskehask (Molla-Musa) [*Voskehask (Molla-Musa) gyughi patmutyuny, azgagrutyny ev banahyusutyny*]. Yerevan: “Areg” publ. house. 2005. 400 p. (in Armenian)
16. Ghanalanyan A. Armenian Proverbs [*Aratsani*], Yerevan: Publ. house AS Armenian SSR, 1960, 398 p. (in Armenian).
17. Ghanalanyan A. Armenian Traditional Narration [*Avandapatum*]. Yerevan: “Hayagitak” publ. 2022. 832 p. (in Armenian)
18. Manandyan H. Works, Volume E, About some problems of the history of ancient Armenia and Transcaucasia [*Yerker, hator E, Hin Hajastani ev Andrkovkasi patmutian mi qani problemneri masin*]. Yerevan: Publ. house AS Armenian SSR. 1984, 615 p. (in Armenian)
19. Mkhitarants Agh. Debris from the Shirak Ambars [*P'shranq Shiraki ambarneric*], Eminian ethnographic collection, Vol. A. Moskov-Alexandrapol. 1901. 338 p. (in Armenian)
20. Movses Khorenatsi. History of Armenia [*Patutiun hayots*]. Tiflis, 1913, 396 p. (in Armenian)
21. Sherents G. The saz of Van. A collection of folk songs, fables, proverbs and riddles of Vaspurakan [*Vana saz. Havaqatsoiq Vaspurakani zhoghovrdakan ergeri, heqiatneri, arakneri ev hanelukneri*]. Tiflis: K. Martirosyan print. house, 1885. 187 p. (in Armenian)
22. Sherents G. The saz of Van. A collection of folk songs, fables, proverbs and riddles of Vaspurakan [*Vana saz. Havaqatsoiq Vaspurakani zhoghovrdakan ergeri, heqiatneri, arakneri ev han elukneri*]. Tiflis: K. Martirosyan publ., 1899. 191 p. (in Armenian)
23. Sedrakyan A. The lire of Mush and Van people [*Qnar mshetsvots ev vanetsvots*], Echmiadzin, publ, Katugike, 1874. 46 p. (in Armenian)
24. Srvuandzteants G. Manana [*Mananai*]. K. Polis. 1876, 457 p. (in Armenian)
25. Srvuandzteants G. Hamov-hotov [*Hamov-hotov*]. K. Polis. 1884, 384 p. (in Armenian)
26. Kajberun G. Armenian customs, Ethnographic journal, Books VII-VIII [*Hajkakan sovorutyunner, Azgagrakan handes, grker VII-VIII*], Tiflis, 1901, pp. 113-204 (in Armenian)
27. Kajberun G. G. Armenian customs, Ethnographic journal, Book IX [*Hajkakan sovorutyunner, Azgagrakan handes, girk IX*], Tiflis, 1902, pp. 83-116 (in Armenian)

28. Buniatow Gr. Ancient monuments in the vicinity of the village of Bash-Shuragel // collection of materials for the description of localities and tribes of the Caucasus [*Pamiatniki drevnosti v okrestnostiakh Selenia Bash-Shuragel // Sbornik materialov dlia opisania mestnostej I plemen Kavkaza*]. Tiflis. 1892, 152 p. (in Russian)
29. Vardanyan S. Tigran Navasardyan's contribution to Aemenian folklore // Armenian Ethnography and Folklore, Vol. 18 [*Vklad Tgrana Navasardjana v armyanskuyu folkloristiku*]. Yerevan: Publ. house AS RA, 1991, pp. 5-58 (in Russian)
30. Patkanov K. Van inscriptions and their meanings for Asia Minor [*Vanskie nadpisi I znachenie ikh dlya istorii Perednej Azii*]. Sankt-Peterburg. 1881, 178 p. (in Russian)
31. Dan R. A Study of the Toponyms of the Kingdom of Bia/Urartu, with a contribution by Marie-Claude Tremouille, Roma, Scienze e Lettere, 2020, 352 p.

Շնորհակալել է / Принята / Received on: 29.07.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 23.09.2023

Հանձնվել է սույ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27.11.2023

#### **Տեղեկություններ հեղինակի մասին**

**Էսթեր Հայկի ԽԵՄՉՅԱՆ**՝ բան. գիտ. թեկնածու, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երևան, ՀՀ,  
էլ. հասցե՝ ekhemchyan@yandex.ru, <http://orcid.org/0000-0002-3638-7855>

**Ester Hayk KHEMCHYAN**: PhD in Philology, Senior Researcher at  
Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA,  
e-mail: ekhemchyan@yandex.ru, <http://orcid.org/0000-0002-3638-7855>

**Эстер Гайковна ХЕМЧЯН**: кандидат филолог. наук, старший научный  
сотрудник Института археологии и этнографии НАН, Ереван, РА,  
эл. адрес: ekhemchyan@yandex.ru, <http://orcid.org/0000-0002-3638-7855>